

լալտնի է, մինչև այժմ կառավարում էր մեծ մասամբ թեմակալ առաջնորդները և հոգաբարձութեանց մեծ նեղութիւններով ձեռք բերած միջոցներով, այժմ գրեթէ բոլորովին ապահովուում է և կարող է թէ ընդարձակուել և թէ կանոնաւոր դպրանոցների շարքն անցնել: Պատիւ և լաւտեսնական հանդիստ հանգուցեալին. երանի թէ ամեն մարդ գէթ մեռնելիս չմոռանար իւր ծննդավայրը. և լիչէր մերձաւորների կարօտ վիճակը:

Նրեանի թեմական դպրոցի կառավարութիւնն ապահովուեց. մի բաւական մեծ հոգսից աղատուեց դպրոցի եռանդուն նախագահ սրբ. Սուքիաս արքեպիսկոպոսը: Յանկանք որ դպրոցի ուսումնական վիճակն էլ բարդաւած է նիւթական ապահովութեան համեմատ:

Հաստատ աղբիւրից կարող ենք հաղորդել, որ Նորին Բարձր Սրբադնութեան գլխաւոր հոգսերից մէկն ալն է ներկայումս, որ կարողանալ դպրանոցը առաջնորդանիստ եկեղեցուց տեղափոխել քաղաքի կենտրոն եկեղեցիներից մէկը և այնտեղ նորա համար մի հոյակապ շէնք կառուցանել:

Յանկանում ենք կատարեալ լաջողութիւն:

### ՎԻԿՏՕՐ ՀԻՒԳՕԻ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԸ

Փետրուարի 13-ին ամբողջ Ֆրանսիան մի շունչ ու մի հոգի դարձած ողևորութեամբ տօնում է իւր ամենամեծ զաւակներից մէկի ծննդեան հարիւրամեակը: Հայրենիքի ամենամեծ զաւակն այս անգամ ոչ պատերազմների լաթանակներ տանող հանճարեղ զօրավար է, ոչ աշխարհի անիւը պտտեցնող մեծ քաղաքագետ, այլ իւր տաղանդաւոր մտքի արտալայտութիւններով դափնիներ վաստակած բանաստեղծ, Ֆրանսիայի ամենամեծ բանաստեղծը: Վիկտօր Հիւգօն ալն սակաւաթիւ քանքարաւոր մարդկանցից մէկն է, որ իւր գրչի շարժումների արդիւնքով գրաւել է ոչ միայն իւր հայրենակիցների զգացմունքներն ու սրտերը, այլ և ամբողջ քաղաքակրթ աշխարհի համակրանքն ու սէրը: Հիւգօն Ֆրանսիայի պարծանքն է և նորա ամենախոշոր շիմնաքարերից մէկը: Ինչպէս որ Հիւգօն ինքը ոգևորում էր ֆրանսիացիներով, այնպէս էլ ամեն մի ֆրանսիացի, հասարակապետութեան նա-

խազահից սկսած մինչև ամենափոքրիկ դպրոցական աշակերտը և ամենալեւտին բանուորը, ոգևորում են նորա անունով: Միմիայն ֆրանսիացիների պէս մեծ ազդը կարող էր տալ Հիւզօի նման մի մտքի մեծութիւն, որի անունը երկար դարերի ընթացքում դեռ կհնչէ միմեանց հետևող սերունդների ականջին և սրտին:

Վիկտոր Հիւզօն ծնունդ է 1802 թ. փետրուարի 26-ին (նոր տոմարով) Բէզանսօնում. նորա հայրը՝ Յովսէփ Լէօպօլդ Հիւզօն ղրինուորական էր և Նապօլէօնեան զօրախմբի մէջ լինելով՝ շարունակ աստանդական կեանք էր վարում, ուստի փոքրիկ Վիկտորի մայրը իւր միւս երկու որդւոց հետ ի միասին ապրում է Փարիզում և մայրն առանձին ուշադրութեամբ հետևում էր Վիկտորի կրթութեանը: Վիկտորն իւր սկզբնական կրթութիւնը ստանում է ճոզևորականի ձեռքով. այդ միջոցին ընտանիքի հայրը Սպանիայում ծառայելով, մի առ ժամանակ ընտանիքն ևս տեղափոխւում է ալնտեղ, սակայն կարճ ժամանակից լստոյ նորից վերադառնում է Փարիզ և Վիկտորին տեղաւորում մի մասնաւոր դպրոցում: Իբրև պանսիօնի աշակերտ նա արդէն փորձում է բանաստեղծութիւններ գրել և 15 տարեկան հասակում մրցանակ է ստանում ֆրանսիական ակադէմիայից «Avantages de l'étude» աշխատութեան համար: Այս լաջողութեամբ խրախուսուած՝ երիտասարդ բանաստեղծը նուիրւում է գրականութեան և 1822 թ. լրիս է տեսնում նորա բանաստեղծութիւնների առաջին հատորը. այնուհետև նորա վէպերն ու դրամաները մէկը միւսի լեւտեից տպագրուելով՝ տարածւում են ամբողջ Ֆրանսիայում և մեծ աղմուկ հանում, որովհետև քանքարաւոր բանաստեղծը իւր գրուածքներով պատերազմ է մղում կլասիցիզմի դէմ. Իսկ երբ բեմի վրայ ներկայացւում է Հիւզօի «Էրնանին» (1830 թ.) հին և նոր ուղղութեան հետևողների կռիւն իւր գաղաթնակէտին է հասնում և նորը լաղթանակող հանդիսանում: Այդպիսով Հիւզօն դառնում է հիմնադիր ու մասնաւոր դպրոցի և ազդեցութիւն ունենում ամբողջ Եւրոպայի գրական ուղղութեան վերայ:

Վիկտոր Հիւզօն բանաստեղծի հուշակ վախելելով 1845 թ. Վրանսիայի պէրիօ կոչումն է ստանում և քաղաքական կեանքի ասպարէզը մտնում, Լուդովիկ Բօնպարտի հակառակ ընթացք է բռնում և 1851 թ. լալտնի անցքերից լստոյ վախ-

չում է Բէլգիա, ուր մի տարի մնալուց լետոյ անցնում է Ջերսէյ և ալնտեղից էլ Գերնսի կղզին: Տասնութը տարի մեծ բանաստեղծը իւր սիրած հայրենիքից դուրս ապրից և ի միջի այլ նշանաւոր երկերի ալդ միջոցին գրեց և տասը հատորից բաղկացած «Թշուառները», որով արտալատեց իւր մարդասիրական ամենալուսնա զգացմունքները:

Ֆրանսիայի ամենածանր օրերի միջոցին, ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ Հիւզօն վերադարձաւ Փարիզ և մասնակիցեց հայրենակիցների թշուառութեան մեծ վշտին: 1876 թ. նա ընտրուեց սենատի անդամ, բայց այլ ևս քաղաքական խնդիրներում մեծ դեր չէր խաղում: 1881 թ. Ֆրանսիան մեծաշուք կերպով տօնեց աղգալին մեծ բանաստեղծի 79 ամեայ տարեդարձը. չորս տարի անցնելուց լետոյ 1885 թ. մայիսի 22-ին վախճանուեց հանճարը և չտեսնուած վառքով թաղուեց անմահների տաճարում, Պանթէօնում:

Այդ օրուանից դեռ ևս 17 տարի չէ անցել և անհ ալմամբողջ Ֆրանսիայում և նոյն իսկ ամբողջ քաղաքակիրթ աշխարհում կրկին հնչում է Հիւզօի անունը: Ամբողջ Ֆրանսիական աղգը ամենամեծ շքեղութեամբ տօնեց իւր մեծ մարդու հարիւրամեայ տարեդարձը. տօնախմբութիւնը տեւեց մի ամբողջ շաբաթ, վետրուարի 25-ից մինչև մարտ 2-ը (նոր տոմարով): Առաջին օրը Սէնի նահանգապետը Փարիզի քաղաքալին տան դահլիճներում ընդունեց օտար աղցերի ներկայացուցիչներին և Ֆրանսիայի հարիւր բանաստեղծներին: Երկրորդ օրը ամբողջ Փարիզը ստքի վրայ էր. պաշտօնական վարչութիւնները, համալսարանը, դպրոցները, բորսան դադարեցրին իրենց գործունէութիւնը. վաճառատները վակուեցան. ամբողջ քաղաքը զարդարուեց դրօշներով, ծաղիկներով, դափներներով: Ամենքը դիմում են դէպի Պանթէօն. հասարակագետութեան նախագահը, սենատորները, աղգալին ժողովի պատգամաւորները, նախարարները, անհամար բազմութիւն հաւաքում են ալնտեղ. լուսաւորութեան նախարարը, նախկին արտաքին գործոց նախարար Հանտօն ոգևորուած ճառեր են արտասանում և զրուատում հայրենիքի մեծ բանաստեղծի գործերն ու լիշատակը, կարդում են Հիւզօի բանաստեղծութիւնները: Այդ տեղից բոլորը դիմում են դէպի Վիկտօր Հիւզօի հրապարակը և կրկին իմաստալից ճառախօսութիւններով հանդիսաւոր կերպով վարադարը լետ քաշում բանաստեղծի:

նորածուլ արձանի վրայից: Այդպէս տօնախմբութիւնները շարունակուում են ութ օր՝ ամենամեծ տպաւորութիւն թողնելով թէ չափահասների և թէ մատաղ սերնդի սրտերի վերայ. ալդ օրերն անմոռաց կըմնան Ֆրանսիացիների համար:

Ահա այսպէս են գնահատում մեծ ազդերն իրենց մեծ զաւակներին:

Ֆրանսիական մեծ բանաստեղծի գրուածքներն և ուղղութիւնն ի միջի ալլոց ազդեցութիւն են ունեցել նաև մեր ազգի նոր գրականութեան վերայ, նամանաւանդ Տաճկահայոց: Մեր քանքարաւոր բանաստեղծներ— Գուրեանի և Պէշիկթաշլեանի վերայ մեծ ներգործութիւն են ունեցել Հիւզօի գրուածքները: Մեր բարձրաստիճան հոգևորական Խորէն-Նարբէյն անձնական լարաբերութիւն ունէր Հիւզօի հետ:

Վիկտօր Հիւզօի նշանաւոր երկերից տաճկահայերը թարգմանել են «Յուսուները», (Գր. Չիլինգիրեանի. Ջմիւռնիա, 1868 թ.) «Նօտր-Դամ Փարիզի» (Տ. Քերզեանի. երկրորդ թարգ. Մ. Նուպարեանի. Ջմիւռնիա, 1871 թ.), «Անջելո» (Ջմիւռնիա 1863 թ.), «Բրիտոս ի Վատիկան» (Հեքիմեանի, Կ. Պօլլիս, 1871 թ.) և այլն: Նոյնպէս թարգմանուած են բանաստեղծութիւններից շատերը: Իսկ Ռուսահայերս ոչ մի նշանաւոր երկ չենք թարգմանել Հիւզօից, դուցէ այն պատճառով, որ առհասարակ Ֆրանսերէնից շատ բան չենք թարգմանել և մեր թարգմանական գրականութիւնն ըստ մեծի մասին ուսերէնից և գերմաներէնից է կաղմակերպուել:

## ՄԱՅՐ ՄԱՂՏՈՑԻ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՂՏՈՒԹԻԻՆԸ

Վերջին ժամանակ մեր մամուլի մէջ շարունակ բողոքներ է լայտնուում, թէ շատ տեղերում աղաւաղուել է Հայաստանեայց ս. եկեղեցու ծէսերի ու արարողութեանց կատարման ձևերը, լրանդարուած է հնաւանդ կղանակը և նորմոծութիւնները սկսել են մուտ գործել մեր եկեղեցիներում: Այս մասին մի ընդարձակ տեսութիւն մինք տպել ենք «Լուսմայրի առաջին տարիների համարներում:

Այդ աղաւաղութեանց առաջն առնելու գլխաւոր միջոցը մալր Մաշտոցի տարածելն է բոլոր եկեղեցիներում և քահանաների մէջ, որովհետև ալդ մատենումն են ամիրով-